ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

01 օգոստոսի 2019 թվականի N114-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N21-Ա որոշումը , **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ **Հակոբ Գարեգինի Կոստանյանին** տրամադրել 100 000 ՀՀ դրամ դրամական օգնություն պապի՝ **Անդրանիկ Գարեգինի Կոստանյանի** մահվան համար /մահացել է 23.07.2019թ., հիմք մահվան վկայական ԲԱ144768, տրված 29.07.2019թ. Վաղարշապատի ՔԿԱԳ տարածքային բաժնից /:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 1

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

6 օգոստոսի 2019 թվականի N115-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանի 2019 թվականի օգոստոսի 6-ի դիմումը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին տալ շինարարության թույլտվություն <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ շենքի փայտե հատակները ե/բ հատակով մասնակի փոխարինման համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 6

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ի. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

6 օգոստոսի 2019 թվականի N116-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով **Սամվել Մնացականյանի** 2019 թվականի օգոստոսի 6-ի հայտը, **որոշում եմ.**

1.Քաղաքացի **Սամվել Մնացականյանին** տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) իրեն սեփականության իրավունքով պատկանող 3-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող տնամերձ հողամասում պարիսպ կառուցելու համար:

2.**Սամվել Մնացականյանը** պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 6

ք. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

9 օգոստոսի 2019 թվականի N117-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը և համաձայն 2019 թվականի օգոստոսի 8-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,008 հեկտար բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված 20,3 քառակուսի մետր մակերեսով շինություններին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն մարզ Արմավիրի համայնք Մերձավան Երևանյան խճուղի N61/1:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 9

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

9 օգոստոսի 2019 թվականի N118-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի188-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն ու N912-Ն որոշումների դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, համայնքային նշանակության քաղաքացիական համալիր ծրագրերին և նրա զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համաձայն 2019 թվականի օգոստոսի 8-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երևանյան խճուղու 61/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության 0,008 հեկտար բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 20,3 քառակուսի մետր /ներքին/ ընդհանուր մակերեսով շենք- շինությունները ճանաչել օրինական և համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի սեփականությունը:

2. Բանավոր առաջարկություն անել ինքնակամ շենք- շինություններն իրակացրած անձ Անուշ Ղարիբի Հովակիմյանին՝/ ծնված 1959թ./ օրինականացված

20,3 քառակուսի մետր /ներքին/ մակերեսով շենք- շինությունները և 0,008 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով գնելու համար:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 9

 հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2019 թվականի N119-Ա

ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N41-Ա որոշումը , **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ Արայիկ Անդրանիկի Մելիքյանին տրամադրել 50 000 ՀՀ դրամ դրամական օգնություն երեխայի՝ Շողեր Արայիկի Մելիքյանի ծննդյան կապակցությամբ /ծնված 2019 թվականի հուլիսի 31-ին, հիմք ծննդյան վկայական ԲԱ146356, տրված Շենգավիթի ՔԿԱԳ տարածքային բաժնից՝ 2019 թվականի օգոստոսի 1-ին/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 12

ք. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի 2019 թվականի N120-Ա

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի առաջին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 12-ի N26-Ն որոշումը, **որոշում եմ.**

1. ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի 2019 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով նախատեսված գումարից 2019 թվականի օգոստոսի 12-ին ձեռք բերված 280 000 ՀՀ դրամ արժողության գույքը նվիրել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ:

Գույքի ցանկը համաձայն հավելվածի:

2. Օրենքով սահմանված կարգով Մերձավանի համայնքապետարանի՝ ի դեմս համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանի և <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ ի դեմս տնօրեն Գայանե Սարգսյանի միջև կնքել նվիրատվության պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 13

համայնք Մերձավան

Հավելված
Հ Հ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2019 թվականի օգոստոսի 13-ի
N 120-Ա որոշման

ՑԱՆԿ

<<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/Հ	Գույքի անվանումը	Քանակը /հատ/	Միավորի գինը /ՀՀդրամ/
1.	Պահարան	4	70 000
Ընդամենը			280 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի 2019 թվականի N121-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով **Սամվել Մնացականյանի** 2019 թվականի օգոստոսի 12-ի դիմումը, **որոշում եմ.**

1.**Սամվել Մնացականյանին** տալ շինարարության թույլտվություն իրեն սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 3-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող տնամերձ հողամասում պարիսպ կառուցելու համար:

2.Սահմանված կարգով իրականացնել տեղական տուրքի գանձումը:

3.**Սամվել Մնացականյանը** շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Մերձավան համայնքի ղեկավարին ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 13

ք. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2 օգոստոսի 2019 թվականի N35-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 2019 թվականի օգոստոսի 1-ի թիվ 01/7/04540-2019 գրությունը, **կարգադրում եմ.**

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2.Աշխատանքային խմբին՝ (Ա.Սարգսյանին) պարբերաբար ստուգայցեր կազմակերպել ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքում ինքնակամ շինարարության և շենք-շինությունները իրենց գործառնական նշանակությանը ոչ համապատասխան օգտագործելու դեպքերը հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով կանխելու համար:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019թվականի օգոստոսի 2
ք. Մերձավան

ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2019 թվականի օգոստոսի 2-ի
N 35-Ա կարգադրության

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝

Արևհատ Սարգսյան — ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Աշոտ Գրիգորյան — ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Վեմիր Խուրշուդյան — <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ աշխատակից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

7 օգոստոսի 2019 թվականի N36-Ա

ԱԼՎԱՐԴ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ և 164-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 8-ի N3-Ա կարգադրությունը, <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ տնօրեն Ալվարդ Խուրշուդյանի 2019 թվականի օգոստոսի 7-ին ներկայացրած դիմումը,**կարգադրում եմ.**

1. <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ տնօրեն Ալվարդ Խուրշուդյանին տրամադրել 2018-2019 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները 2019 թվականի օգոստոսի 12-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ /20 աշխատանքային օր՝ նվազագույն, 4 աշխատանքային օր ՝ լրացուցիչ/:

2. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի սեպտեմբերի 13-ին:

3. Ալվարդ Խուրշուդյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, նրա լիազորությունների իրականացումը վերապահել <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ գրադարանավար Գայանե Սրապյանին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 7

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

12 օգոստոսի 2019 թվականի N37-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, **կարգադրում եմ.**

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ (Ա.Սարգսյանին) իրականացնել ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների ավարտի փաստագրումը և կազմել ավարտված աշխատանքների ընդունման ակտ:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 12

ք. Մերձավան

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2019 թվականի օգոստոսի12-ի
N 37-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Արևհատ Սարգսյան — ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Գագիկ Գևորգյան — ՀՀ ՔՏՀԱՏՄ Արմավիրի տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության գլխավոր մասնագետ

Հրանտուհի Գևորգյան — ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

12 օգոստոսի 2019 թվականի N38-Ա

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ և 164-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 8-ի N3-Ա կարգադրությունը, ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր 1.2-1/ համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը, ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անյուտա Սաֆարյանի 2019 թվականի հուլիսի 11-ի և օգոստոսի 12-ի դիմումները, **կարգադրում եմ.**

1.ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անյուտա Սաֆարյանին /ծածկագիր 1.2-1/ տրամադրել 2018-2019 թվականների ամենամյա արձակուրդը՝ 2019 թվականի օգոստոսի 16-ից մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ /20 աշխատանքային օր՝ նվազագույն, 4 աշխատանքային օր՝ լրացուցիչ/:

2.Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի սեպտեմբերի 19-ին:

3.Անյուտա Սաֆարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, նրա լիազորությունների իրականացումը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-1/ Սոնա Ավետիսյանին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 12

ք. Մերձավան